Կարգապահական գործ թիվ ԿԳ-24169

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Կիմա Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 735), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Վաչագան Գասպարյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ)**, հայտնել է, որ թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով դատական ներկայացուցչության համար ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ նաև Պայմանագիր)** է կնքել փաստաբան Կիմա Հակոբյանի **(այսուհետև՝ Փաստաբան)** հետ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը պատշաճ չի կատարել իր պարտականությունները, մասնավորապես՝ չի ներկայացել 10.07.2024թ. կայացած դատական նիստին, ինչպես նաև չի ներկայացրել դատարան փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդություն:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

թիվ ԿԳ-24169-2-Ա
25.12.2024թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.10.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կիմա Հակոբյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Վաչագան Գասպարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 27.08.2024թ. և 04.09.2024թ. ներկայացրած բացատրություններով հայտնել է, որ թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով չի մասնակցել 10.07.2024թ. կայացված դատական նիստին, քանի որ նույն օրը, ժամը 12:45-ին՝ որպես հանրային պաշտպան մասնակցել է մեկ այլ դատական նիստի թիվ ԼԴ/0302/02/24 քաղաքացիական գործով:

Ինչ վերաբերում է փորձաքննության միջնորդության ներկայացման հարցին, ապա Փաստաբանը նշել է, որ փորձաքննություն արդեն իսկ իրականացվել է թիվ ՎԴ6/0014/05/15 վարչական գործով (Դիմողի մյուս գործով) և կրկին փորձաքննության իրականացման անհրաժեշտությունը բացակայում է:

Փաստաբանը նաև տեղեկացրել է, որ ստեղծված իրավիճակով պայմանավորված առաջարկել է Դիմողին լուծել պայմանագիրը և կատարել վերջնահաշվարկ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Փաստաբանը 05.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ վերահաստատել է նախկինում արտահայտած դիրքորոշումը: Փաստաբանը հայտնել է, որ 10.07.2024թ. նշանակված դատական նիստին չի մասնակցել, քանի որ նույն օրը մեկ այլ գործով ժամը՝ 12:45-ին ունեցել է դատական նիստ Ալավերդի քաղաքում, իսկ ժամը 15:00-ին մասնակցել է խնամակալության հանձնաժողովի նիստին Տաշիր քաղաքում:

Փաստաբանի պնդմամբ, այդ ընթացքում իր կողմից կազմվել և ուղարկվել են դիմումներ ՀՀ վարչապետին, ՀՀ Գլխավոր դատախազին, ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե, Վանաձորի քաղաքապետարան, մի դեպքում խնդրելով քրեական վարույթ նախաձեռնել, մյուս դեպքում՝ անվավեր ճանաչել վարչական ակտը:

Միաժամանակ, Փաստաբանը հայտնել է, որ այդ ընթացքում բազմաթիվ անգամներ զանգել է Դիմողին, հրավիրել հանդիպումների, սակայն վերջինս հրաժարվել է՝ բերելով տարբեր պատճառաբանություններ: Փաստաբանը նշել է, որ սույն թվականի մայիսից մինչև հուլիսի 10-ը Դիմողը չի զանգել, չի եկել նոր լիազորագիր կազմելու և գործի հետագա

ընթացքը քննարկելու:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Փաստաբանների պալատի նախագահի 13.09.2024թ. թիվ 358-Ա/ԿԳ-24169 որոշմամբ փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանի նկատմամբ Օրենքի *19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի* ***(այսուհետև նաև՝ Կանոնագիրք)*** *2.7.2 և 3.5.5 ենթակետերի* խախտման *հատկանիշներով* հարուցվել է կարգապահական վարույթ:

26.09.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 15.11.2024թ. կազմել է եզրակացություն:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 25.12.2024թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Կիմա Հակոբյանը ստանձնել է Վաչագան Գասպարյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է «Կիմա Հակոբյան» ՍՊԸ-ի և Վաչագան Գասպարյանի միջև 04.05.2021թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*

2. Պայմանագրի 2.1 ենթակետի համաձայն՝ կատարողը կազմակերպում է Պատվիրատուի դատական ներկայացուցչությունը ըստ հայցի Վաչագան Գասպարյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, երրորդ անձ՝ Լևոն Պողոսյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Կիմա Հակոբյան» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի*

պատճենով:

3. 06.05.2021թ. Փաստաբանը ՀՀ վարչական դատարան է հասցեագրել հայցադիմում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը ստացել է թիվ ՎԴ6/0038/05/21 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

4. Թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով նշանակել է դատաքննություն 2024 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ վարչական դատարանի որոշման պատճենով:*

5. Փաստաբանը չի ներկայացել թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով 2024 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին նշանակված դատական նիստին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. Թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով Փաստաբանը չի ներկայացել փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կիմա Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ (մինչ այդ նշանակված կարգապահական տույժերը համարվում են մարված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է*

վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը 04.05.2021թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործի շրջանակներում:

Հիշատակված գործով Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանության համար չի կատարել անհրաժեշտ գործողությունները վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Մասնավորապես, Փաստաբան Կիմա Հակոբյանը չի մասնակցել թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով 2024 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին նշանակված դատական նիստին և որևէ միջնորդություն չի ներկայացրել դատարան դատական նիստը հետաձգելու վերաբերյալ:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Փաստաբանի կողմից նշված օրը դատական նիստերին չմասնակցելու պատճառներին և հետևանքներին: Այսպիսով, 2024

թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի մասնակցել, մեկ այլ քաղաքացիական գործով (թիվ ԼԴ/0302/02/24) նույն օրը ժամը՝ 12:45-ին դատական նիստի մասնակցելու պատճառով: Բացի այդ, Փաստաբանը հայտնել է, որ նույն օրը ժամը՝ 15:00-ին մասնակցել է խնամակալության հանձնաժողովի նիստին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության բարեխիղճ կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետության հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման անհրաժեշտ և օգտավետ գործողությունների կատարման կարևորությունը՝ փաստաբանն՝ իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն պարտավոր է ոչ միայն կազմել և դատարան ներկայացնել անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը, այլ նաև անձամբ մասնակցել նշանակված դատական նիստերին: Ավելին, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ դատական նիստին չմասնակցելը ինքնին չի կարող համարվել Օրենքի և Կանոնագրքի պահանջների հակասող վարքագիծ միայն այն դեպքում, երբ դատական նիստին չմասնակցելը պայմանավորված է Փաստաբանից անկախ հանգամանքներով և վերջինս պատշաճ եղանակով տեղեկացել է այդ մասին ինչպե՛ս վստահորդին, այնպե՛ս էլ դասարանին:

Սույն պարագայում, Փաստաբանի կողմից դատական նիստին չմասնակցելու մտադրության վերաբերյալ ո՛չ Դիմողը, ո՛չ էլ դատարանը տեղեկացված չեն եղել, ինչը հաստատվում է 25.12.2024թ. կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանի արտահայտած դիրքորոշմամբ: Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի դրսևորած այս վարքագիծն առհասարակ չի բխել Դիմողի նպաստավոր շահերից և իրավունքների արդյունավետ պաշտպանությունից:

Հարկ է նշել, որ Պայմանագրի առարկան կայանում է դատարանում հայցվորի իրավունքները և շահերը ներկայացնելու մեջ, ուստի՝ Փաստաբանի դատական նիստին չմասնակցելը և դա վստահորդի հետ չհամաձայնեցնելը տրամաբանորեն հակասում է նաև նրա պայմանագրային պարտավորություններին:

Այս համատեքստում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը, առաջնորդվելով վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանությունից, պետք է ջանքեր գործադրեր և չսահմանափակվեր միան անհրաժեշտ դատավարական փաստաթղթեր կազմելու և դատարան ներկայացնելու գործողություններով, այլ պարտավոր էր ներկայանալ թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով 2024 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 14:30-ին նշանակված դատական նիստին:

Վերոգրյալը հաշվի առնելով, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն իր վստահորդի շահերը ներկայացնելիս թույլ է տվել այնպիսի խախտումներ, որոնք չեն տեղավորվում Օրենքով և Կանոնագրքով սահմանված փաստաբանի բարեխիղճ

իրավական օգնություն ցուցաբերելու և հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու ողջամիտ սահմաններում:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից փորձաքննության վերաբերյալ միջնորդություն դատարան չներկայացնելու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով 25.09.2024թ. դատարանի վճռով Դիմողի ներկայացրած հայցի մերժման հիմքում որևէ անդրադարձ չի կատարվում փորձաքննության անցկացման անհրաժեշտության և դրա բացակայության վերաբերյալ: Այլ կերպ ասած, Փաստաբանի կողմից փորձաքննության միջնորդություն չներկայացնելը որևէ բացասական հետևանք չի առաջացրել Դիմողի իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության համար: Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողի կողմից Փաստաբանին վերագրվող այս վարքագիծը որևէ կերպ չի հակասում Օրենքով և Կանոնագրքով սահմանված պահանջներին:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի *19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5* ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ հաշվի է առնելով

վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, ~~ոդ~~ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը: Հաշվի առնելով այն, որ Փաստաբանը պետք է գիտակցեր, որ իր գործողություններից ու անգործությունից ուղղակիորեն կախված է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը, որպիսի պայմաններում էլ պետք է կանխատեսեր իր վարքագծի հնարավոր հետևանքները, առնվազն ձեռնարկելով ողջամիտ ջանքեր Դիմողի շահերը լավագույնս ներկայացնելու համար, որը պետք է իրականացվեր թիվ ՎԴ6/0038/05/21 վարչական գործով դատական նիստերին մասնակցելու միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 735) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24169-2-Ա
25 դեկտեմբերի 2024թ.
ք.Երևան